թուղիկոսին, որ ս. Գրիգորի նշխարներից մի մասն իրեն. նոքա յանձն չառան և ասում էին թէ «ոչ ուրեք երբէք բաշխեալ են նշխարքք Գրիգորի և ոչ ումեք ունիմք իշխանութիւն հանել մասն ի նմանէ և տալ քեզ»։ Իսրայէլ եպիսկոպոսն իւր նպատակին հասնելու համար դիմում է Գրիգոր պատրիկի կնոջ Հայոց Տիկին Հեղինէի՝ օգնութեանը, որ Աղուանից երկրից էր. վերջինիս յաջողում է կաթուղիկոսին համոզելու և ստանալու Ս. Լուսաւորչի ծնօտի մի մասը, որ Իսրայէլ բերում տեղաւորում է Աղուանից Գլխոյ վանք կոչուած մենաստանում։ Աւանդութիւն կայ, որ Ս. Լուսաւորչի գլուխն յետոյ տարուել է Իտալիա, ուր Նէապոլ քաղաքում պահում է նա, ինչպէս պատմում է Զամչեանը (Ա. 635), Ս. Լուսաւորչի անուանը նուիրած մի եկեղեցու մէջ։

Այսպէս ուրեմն կանուխ ժամանակներից ըսկսած բաժան բաժան է լինում մեր ս. հայրապետի մարմինը. նշխարների շնորհիւ կանգնում են մատուռներ և վանքեր Հայաստանում և Հայաստանից դուրս։ Այդ նշխարներից մէկը՝ Ս. Լուսաւորչի ատամը՝ մի ժամանակ պահում էր Աւագ վանքում։ Թէև այժմ մասունքը չկայ, սակայն մնում է տուփը, որ մի նշանաւոր հնութիւն է համարուում և կոչւում է Տեղ-տափ կամ ըստ Ինճինճեանի՝ Դեղ-թափ։ Սա ձեռքի մը չափ մոխրագոյն փայլուն